

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՎԱԽԵՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ (16-19-ՐԴ ԴԱՐԵՐ)

«...Թոյլ շտա ս իրնց հնգադոց եկեղեցիներում ծնծոյալ նուագելու, բարձր ձայնով երգելու եւ գիճի խմելու...»

(Հրաման Սուլթան Սուլէյման Ա-ի, Վաւ. Թիւ 5, էջ 211)

Միջնադարեան հայ-թուրքական յարաբերութիւններ, դարասկիզբի հայկական ցեղասպանութեան աղբիւրագէտ-պատմաբան Փրոֆ. Աւետիս Փփաղեանը ընթերցողներին սեղանին է դրել իր հերթական ուշագրաւ աշխատութիւնը՝ «Թուրքական վաւերագրերը Հայաստանի եւ հայերի մասին (16-19րդ դարեր)» խորագրով:

292 էջ ընդհանուր ծաւալով այս գիրքը բաղկացած է աղբիւրագիտական առաջաբանից, երեք գլուխների մէջ ամփոփուած ուսումնասիրութիւնից, նորայայտ վաւերագրերի հայերէն թարգմանութիւններից եւ գիտական օժանդակ նիւթերից՝ ծանօթագրութիւններ, թուրք-հայերէն բառարան, անձնանուններ եւ տեղանունների ցանկեր, բովանդակութեան թրքերէն համառոտ ամփոփում եւ գրող Ստեփան Ալաջալեանի «Երկու Խօսք» կարծիք-զնահատականը:

Աշխատութեան ծանրութեան կենտրոնը Հայաստանի եւ հայերի մասին պատմող թուրքական նոր վաւերագրերն են, որոնք տքնալան աշխատանքով, գիտական բանիմացութեամբ եւ համբերատար սիրով թարգմանել, վերլուծել եւ գիտական լայն շրջանառութեան մէջ է դրել օսմանագէտ-պատմաբան Աւետիս Փփաղեանը՝ Նախ՝ առաջարկի մասին: «Առաջաբան» շարքային համեստ անունի տակ հեղինակը իր ընթերցողներին է հրամցնում հմտալի գիտա-վերլուծական մի լուրջ ուսումնասիրութիւն կամ, աւելի որոշակի, մի տեսութիւն 16-19-րդ դարերում ապրած թուրք յայտնի պատմաբանների, աշխարհագրագէտների, նշանաւոր ճանապարհորդների մասին, նրանց ստեղծած եւ

սերունդներին ժառանգած աշխատութիւնների, սուլթանական որոշումների, հրամանագրերի եւ օրէնքների ժողովածուների, տեղեկագրերի, զեկուցագրերի, վկայութիւնների եւ այլ բնոյթի բազում-բազմազան վաւերագրերի մասին: Ուշադիր կարդալով այն, ընթերցողը ձեռք է բերում մինչ այս մեզ անծանօթ աւելի քան մէկ տասնեակ թուրք հեղինակների եւ նրանց աշխատութիւնների մասին կարեւոր տեղեկութիւններ, որոնք աւելւում են Հայաստանի եւ հայ ժողովրդի կեանքին եւ երախտիքի խօսք է ստում այն հայ պատմաբանների մասին, որոնք հետաքրքրուել, դտել, ուսումնասիրել, թարգմանել եւ հրատարակել են յիշեալ թուրք հեղինակների տպագրուած երկերից, արխիւային նիւթերից այնքան բան, որ հնարաւոր է եղել:

Փրոֆ. Աւետիս Փփաղեանը առաջինը եւ ակնածանքով խօսում է պատմաբան-աղբիւրագէտ Արամ Սաֆրաստեանի «Թուրքական աղբիւրները...» քառահատոր աշխատութեան մասին. «Թուրքական աղբիւրների գիտական ուսումնասիրութեան ու հայերէն թարգմանութեան նախաձեռնութիւնը, ինչպէս նաեւ հրատարակումը պատկանում է Արամ Սաֆրաստեանին: Մինչեւ Արամ Սաֆրաստեանը, հայ պատմագրութեան մէջ ոչ ոք չէր զբաղուել թուրքական աղբիւրները վերծանելու, թարգմանելու եւ գիտական շրջանառութեան մէջ դնելու խնդրով: Նա առաջինն էր, որ ձեռնարկեց օսմաներէնի արեւակաւ եւ պատմական տեքստիւնների (եղբերի) թարգմանութեան բարդ գործը»:

Այսպէս, արդոյ հեղինակը կարեւոր

տեղեկութիւններ է տալիս հայ պատմաբաններ, աղբիւրագէտներ, գիտական-թարգմանիչներ Սիմէոն Երեւանցու, Սարգիս Գարագոզի, Յակոբ Փափազեանի, Մանուէլ Զուլայեանի եւ այլոց յայտնաբերած, վերծանած կամ թարգմանած եւ հրատարակած թրքագիտական աշխատութիւններէ մասին: 1967-ից իբր ձեռնարկ-միւսմամբ եւ ձեռնարկներով որպէս աղբիւր հայ ժողովրդի պատմութեան (17-րդ դար)՝ ուշադրաւ աւարտաճառով (ուսուերէն հրատ. 1973, Երեւան), գիտնականների վերոյիշեալ խմբին է միանում Աւետիս Փափազեանը: Խուճը, որի հաւաքական ջանքերով թուրքական աղբիւրների եւ վաւերաբանի ուսումնասիրութեան, թարգմանութեան եւ հրատարակման գործը հասել է իր ներկայ մակարդակին:

Աշխատութեան բուն գիտա-հետազոտական բաժինը ամփոփուած է յաջորդական երեք գլուխներէ մէջ (էջ 34-129):

Ա- Հայերի իրաւական վիճակը Օսմանեան կայսրութիւնում:

Բ- Հողային քաղաքականութիւնն ու հարկային կառուցուածքը:

Գ- Պատմական Հայաստանը թուրք աշխարհագրիչների երկերում:

Առաջին զլխում, ինչպէս յուշում է վերնագրերը, հեղինակը թուրքական վաւերագրերի հիման վրայ նկարագրում-վերլուծում է հայ համայնքի իրաւական վիճակը Օսմանեան կայսրութեան մէջ 16-18-րդ դարերում: Ըստ վաւերագրի ճիշդ է, որ Սուլթան Մեհմետ Բ-ը կ. Պոլիսը գրաւելուց տարւտարի յետոյ յատուկ ֆերմանով հաստատեց Պոլսոյ հայոց պատրիարքութիւնը, տալով նրան հայ համայնքի հոգեւոր եւ քաղաքական գործերը վարելու իրաւունք:

Պատրիարքի համայնքային իրաւունքների ին-ինչ խախտումների դէպքում սուլթանները իրենց ֆերմաններով արգելել եւ սաստել են նրանց հեղինակներին եւ վերահաստատել պատրիարքական իրաւունքները, բայց, ինչպէս վաւերագրային փաստերով ցոյց է տալիս հեղինակը, դրանք հիմնականում կրել են ժամանակաւոր եւ ձեւակամ բնույթ ու մնացել թղթի վրայ: «Այլադատւած հպատակներին, — գրում է յարգելի հեղինակը, — աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւն տալով, սուլթան Մեհմետ Բ-ը եւ նրա յաջորդները ջանում էին համայնքի

համակարգը ծառայեցնել իրենց Ուսանողական նպատակներին: Նրանք օգտագործում էին պատրիարքների հեղինակութիւնը՝ հպատակներին հլու հնազանդ եւ օտար պետութիւնների ազդեցութիւնից հեռու պահելու համար: Նրանց միջոցով զանազան էին տարրեր տեսակի հարկեր, թե՛ պետութեան օգտին եւ թե՛ պատրիարքութեան համար: (էջ 34):

Մէջերեւոյ համապատասխան վաւերագրեր, Աւետիս Փափազեանը ցոյց է տալիս որ թուրք սուլթաններն ու բարձրաստիճան այլ պաշտօնատար անձինք մէկ ձեւով ստորագրել են հայ համայնքին ու հայ պատրիարքին շնորհուած իրաւունքի ֆերմանները, իսկ միւս ձեւով՝ խախտել ու արգելել դրանք: Այդ տոյն մեծագոր սուլթանների ու նրանց բարձր պաշտօնատարների ստորագրութիւնները կրող ֆերման-հրամանագրերով սեփականացուել-իւլամացուել, հրկիզուել ու քանդուել են հայ եկեղեցիներ ու եկեղեցապատկան շինութիւններ, գործադրուել-օրինականացուել են քրիստոնեայ հայերի հաւատափոխութիւնը, մանկահաւաւը, ստրկավաճառութիւնը, քնակավայրերի աւերում-կործանումը, քնակչութեան բայւանը, խորակամութիւնը եւ հասարակական այլ չարիքներ:

Այս ամէնը Օսմանեան կայսրութիւնը հասցնում են տնտեսական եւ քաղաքական ծանրագոյն ճգնաժամի, ճնշուած փոքրամասնութիւններին մղում ինքնապաշտպանական-ազատագրական պայքարի, իսկ մեծ տէրութիւններին առիթ բնծայում շահագիտական միջամտութեան համար:

Ստեղծուած վիճակից դուրս գալու ձախող փորձեր էին 1830-ի Թանզիմաթի եւ 1856-ի Հաթիթ-Հիւսնյուհի սուտ խոստումները եւ 1890-ականների հայերի զանգուածային անզուժ ջարդերը, բուն իւլամացումը, որոնք երիտ-թուրքերի իշխանութեան ժամանակ հանգեցրին «20-րդ դարի՝ մարդկութեան դէմ ուղղուած առաջին ցեղասպանութեանը»:

Աշխատութեան երկրորդ զլխում հեղինակը ներկայացնում է 16-19-րդ դարերում Օսմանեան կայսրութեան մէջ իրականացուող հողային քաղաքականութեան հարկային համակարգի կառուցուածքի եւ հարկերի բաշխման ու գանձման փաստական պատկերը, միւս հիմնուելով թուրքական աղբիւրների վրայ: Ան-

չուշտ, նա օգտագործում է նաև Հայկական, պարսկական, արաբական, ռուսական եւ այլ աղբիւրները, երբ Հարկ է լինում Հաստատել, ճշգրէ կամ լրացնել թուրքական աղբիւրների Հաղորդած փաստերն ու իրողութիւնները:

Օսմանեան օրէնսդրութեան պատմական աղբիւրների Համառօտ տեսութիւնն անելուց եւ թուրքիայում ճորտատիրական յարաբերութիւնների առկայութեան մասին իր տեսակէտը շարադրել-Հիմնադրելուց յետոյ, Հեղինակը ծանրանում է կայսրութեամ տարածժում հողի սեփականատիրական ձևերի, հարկերի տեսակներին եւ նրանց բաշխման ու գանձման սկզբունքների եւ եղանակների վրայ:

Ճիշդ է վարուում Հեղինակը, երբ առաջինը մեզ ծանօթացնում է Հողի պատկանելութեան Հիմնական որոշիչ սկզբունքի Հետ: Նա գրում է «Օսմանեան կայսրութեան հիմնադրումից յետոյ նուաճումը բոլոր հողերը պատկանում էին պետութեանը: Որեւէ երկիր նուաճելու ընթացքում հողը չէր խլոււմ տիրոջից՝ այլ հողատէր գիւղացիմ առաջուայ նման շարունակում էր մշակել այն: Գիւղացու մշակած հողը իրեն չէր պատկանում, այլ պետութեանը: Փաստօրէն գիւղացիմ հողիմ տիրում էր ժամանակաւոր քափուի իրաւունքով: Սակայն արտադրամէից ստացուած եկամուտի համաձայն, պետութեանը վճարում էր 10-ից, 8-ից կամ 6-ից մէկը, որը կոչւում էր խարաջ»:

Հողատիրութեան ձևերը կայսրութեան ողջ տարածքում, ինչպէս վկայում է Հեղինակը, որոշուում էին ելնելով այս գլխաւոր սկզբունքից: Հողի տէրը պետութիւնն էր, պետութեան զերպզոյն տէրը՝ սուլթանը: Ուրեմն, նա էլ տնօրինում էր այն եւ յատկացումներ անում նրանից իր պաշտօնականներին, ստեծելով Հողատիրութեան տարբեր ձևերի առաջացման Համար Հիմք:

Յիշեալ ժամանակներում Արեւմտեան Հայաստանում մշակելի Հողերը բաժանուում էին 3 Հիմնական խմբերի. 1) Պետական Հողեր, 2) Վակֆային Հողեր, 3) Մասնաւոր սեփականատիրական Հողեր (մուլք կամ Հայրենիք): Հեղինակը վաւերագրերից քաղուած տուեալները Հիման վրայ առիւ է այդ խմբերի ու նրանց բաղում ճիւղաւորումների ծագման եւ կիրառութեան պատմականը՝ ճշգրէլով կամ

լրացնելով այդ բնագաւառում ընթերցողների նախապէս ունեցած գիտելիքները:

Ապա, Հեղինակն անցնում է Օսմանեան կայսրութեան մէջ կիրարկուող Հարկային Համակարգի Հետազօտութեանը: Հարկը որպէս կայսրութեան պահպանութեան, նուաճողական պատերազմների եւ իշխող վերնախաւի շքեղ ապրուստի մատակարարման գլխաւոր աղբիւրի, ամէնից աւելի է զբաղեցրել սուլթանների, օրէնսդիրների, իրաւագէտների, պատմաբանների, աշխարհագիրների ժամանակը, ուշադրութիւնն ու միտքը: Նրանք ենելով պետութեան եւ սեփական կարիքների Հաշուառումից եւ լայնօրէն օգտագործելով նախկինում գործած սելճուկեան, պարսկական եւ արաբական օրէնքները, թուրք օրէնսգէտները ստեղծում են Հարկային օրէնքների սեփական Համակարգը:

Ըստ այդ Համակարգի, օսմանեան Հայաստանների վճարած Հարկերը թաժանուում էին երկու խմբի՝ օրինական Հարկեր, որ Հիմնուում էին շարիաթի վրայ, եւ սովորութային հարկեր: Շարիաթական սկզբունքներով կամ պետական օրէնքներով նշանակուած Հարկերի մէջ մտնում էին աշարը, խարաջը, զէւաքը եւ սրանց վրայ Հիմնուած բազմատեսակ ու բազմաթիւ ուրիշ Հարկեր: Սովորութային Հարկերը նշանակուած էին սուլթանների յատուկ Հրամաններով, արտակարգ դիժպէտի եւ առանձնապէս պատերազմների դէպքերում:

Աւետիս Փափազեանի Հետազօտութիւնից պարզ է դառնում Հետեւեալ կարեւոր իրողութիւնը. եթէ առաջին խմբի Հարկային օրէնքները ունէին քիչ թէ շատ որոշ Հիմնաւորում ու դրոյշների կայունութիւն, երկրորդ խմբի օրէնքները զուրկ էին այդ ամէնից: Սրանք բժամանակի ընթացքում, ըստ երկրի իրադրութեան եւ ըստ կամա իշխողների, այնքան էին փոփոխուում, այնքան էր աճում նրանց թիւը, որ շատ դէպքերում նրանք Հակասում էին ու ժխտում իրար, Հարկահան պաշտօնականներին ապահովելով նորանոր եկամուտներ, իսկ ոչ մահմանական փոքրամասնութիւններին, այս թւում եւ Հայերին, պատճառելով նոր, աւելի ծանր զրկանքներ:

Հարկատուների Համար անշուշտ, դժբախտութիւն էր հարկատեսակների անսովոր շատութիւնը. քայքայ որոշ շրջանների բնակչու-

քեան համար պակաս աշխատւի չեմ եղել ման պետական-օրինաւոր մամաշուած հարկերի դրոյթների մեծ տատանումները: Ահա մի օրինակը. ըստ վաւերագրերի զլիսհարկի վճարելի դրոյթը տատանուել էր 26 քաջէից 240 քաջէի սահմաններում: (Աքաջ — թրքական մանր արծաթեայ դրամ, որ յետոյ փոխարինուել է ղուրուշուվի Պարզ է՝ որ հարկահան պաշտօնեաները պիտի ձգտէին դանձել առաւելագոյնը:

Համաձայն գոյութիւն ունեցող պաշտօնական օրէնքների, հարկերի զուամարային չափերը կամ դրոյթները պէտք է որոշուէին ըստ հարկատուների նիւթական վիճակի: Սակայն ըստ էութեան ընդունելի այս սկզբունքը մեծապէս շարաշահուել է Հէնց նրա օրէնսդրի Հեղինակների, ապա՝ նաեւ ու յատկապէս գործարող տեղական պաշտօնէութեան կողմից, կայսրութեան ոչ մահմետական փոքրամասնութիւններն հասցնելով ծայր աղքատութեան եւ տուճ ու տեղ, արտ ու ալքի, հող ու Հայրենիք լքել-հեռանալու ստիպողութեան առաջ: Ահա, աշխատութեան մէջ նկարագրուած այդպիսի բազում դէպքերից մէկը, քաղուած էրզրումի վիլայէթի կանոննամէ-ում բերուած թիւ 57 յօդուածը:

«Եւրխանէի գիւղերի հողերը քարքարուտ են, մշակութեան համար պիտանի հողը քիչ է եւ զիւղացիների ապրուստը մեծ դժուարութիւնների հետ է կապուած: Զբաղորներից ոմանք խարաջն ու իսպէնջը եւ այլ հարկերը վճարելու կարողութիւն չունենալով՝ լքել են Հայրենիքը եւ ոմանք էլ ցրուելու վրայ են: Երբ գործին ծանօթ մարդիկ մանրակրկիտ կերպով քննեցին վերոյիշեալ գիւղերի առայաների վիճակը, պարզուեց որ երկու տարուց ի վեր 180 ընտանիք լքել են Հայրենիքը եւ նրանց ուր գնալը յայտնի չէ: Արանց խարաջից, իսպէնջից եւ այլ հարկերից ոչ մի եկամուտ չի ստացուել»:

Եթէ յիշեալ բոլոր փաստերին աւելացնենք աշխատութեան մէջ քննուած «միայն անհաւատներից գանձուող հարկերի» եղակի, արտառոց փաստը, մեզ համար միանգամայն հասկանալի կը լինի հեղինակի գիտական զսպուածութեամբ շարադրուած եզրակացութիւնը. «Վերեւում բերուած փաստերը լիովին բացայտում են Օսմանեան պետութեան կողմից նուաճուած տարածաշրջաններում, յատ-

կապէս պատմական Հայաստանում բնակչութեան նկատմամբ կատարուող խտրականութեան, ծանր հարկապահանջութեան եւ գանազան շարաշահումների եւ կողոպուտի հետեւողական քաղաքականութիւնը» (էջ 102):

Այլաստութեան վերջին երրորդ գլուխը նուիրուած է Պատմական Հայաստանը թուրք աշխարհագիրների երկերում թեմայի հետագոտութիւնը: Եստ կարեւոր եւ հետաքրքրական թեմա, որ մինչ այս անյայտ է եղել ոչ միայն շարքային ընթերցողների, այլեւ շատ հայ եւ օտար մասնագէտների համար: Թուրքական աշխարհագրական գրականութեան զարգացման կարճուց յետոյ, հեղինակն անցնում է բուն նիւթին: Նա պատմական հաղորդականութեամբ ընթերցողին է ծանօթացնում թուրք աշխարհագիրների, նշանաւոր ճանապարհորդների եւ պատմաբանների այն երկերին, որոնցում տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով, տարբեր ծաւալով ու խորութեամբ խօսուած է Հայաստանի աշխարհագրական դիրքի, սահմանների, հարեւան երկիրների, բնութեան, քաղաքների ու գիւղերի, ժողովրդագրութեան (դեմոգրաֆի) կամ տնտեսութեան վիճակի մասին:

Այդ իմաստով հեղինակը առանձնացնում է 17-րդ դարում ստեղծուած բերք կարեւոր թուրքական աղբիւրներ, աշխարհագիր քեաթիպ Ձէլէպիի «Ծիհան-Նիւուման» (Աշխարհի հայնի), ճանապարհորդ Էվլիա Ձէլէպիի «Աեյահազ-նամէն» (Ուղեգրութիւն), եւ պատմագիր Միւնէճեփի Պաշիի «Ծամի ատ-տուալը» (Տիեզերական պատմութիւն) աշխատութիւնները: Աւետիս Փափազեանը նախ թէրցողին հանգամանօրէն տեղեկացնում է այս մասին, թէ վերոյիշեալ աշխատութիւններում նրանց հեղինակներն ի՞նչ են պատմել կամ վկայել Հայաստանի եւ հայրի մասին. ապա, բարեխիղճ աղբիւրագէտը մասնագիտական քննարկման է ենթարկում նրանց օգտագործած աղբիւրների վաւերագրային որակն ու պատմական հաստատութեան ատրճանը: Այս ուղղութեամբ անհրաժեշտ յիշեցումներից, ցուցումներից եւ հնարաւոր ճշգրտաշուկումներից յետոյ, նա յանգում է մի կարեւոր եզրակացութեան. ըստ որում եթէ փաստագրական սխալները մեծ մասամբ վերագրելի են օգտագործուած պարսկական, արաբական

եւ այլ արտաքին աղբիւրների ոչ ճիշդ վեր-  
ծամամ եւ ամբնադատ օգտագործմանը, ապա  
պատմական երեւոյթների եւ իրադարձու-  
թիւնների մեկնաբանմամբ ո՛չ գիտական, այլ  
խտրական միտումները լրիւ վերագրելի են  
բուրժ հեղինակների ազգայնամոլութեանը:

Այս մասին հեղինակի մէջըերած ու  
մեկնաբանած բազում-բազմապիսի զանչտական  
ձօտեցող օրինակներից յիշեմ երկուքը: 1957-  
ին Քեաթիպ Չէլչպիի 300-ամեակի առիթով,  
Թուրքիայում լոյս տեսած ուսումնասիրութիւն-  
ների ժողովածուի մէջ, պատմաբան Համիտ  
Սատի Սիլէնը «Ճիհաննիւմա»ին նուիրուած  
գրութեան մէջ Քեաթիպ Չէլչպիի «Արեւմտիս  
երկրի մասին» խորագիրը կրող գլուխը դարձել  
է «Արեւելեամ Ամառուլիս»: Իսկ 1957-1983-ին  
լոյս տեսած «Ընդարձակ Օսմանեան պատմու-  
թիւն» եօթնատրեակում, մանրամասն խօսուած  
է կայսրութեան մէջ մտնող երկրների եւ  
ժողովուրդների մասին, բայց Հայաստանի  
մասին ոչ մի խօսք:

Նկատի ունենալով մերկ ստի եւ աննա-  
խաղէպ ցինիզմի իրար զերազանցող բազմաթիւ  
այսպիսի փաստեր, աշխատութեան հեղինակը  
եզրակացնում է. «...ժամանակակից Թուրք  
պատմաբանները իրենց աշխատութիւններում  
հետապնդում են ազգայնամոլական նպատակներ,  
փորձելով նենգափոխել եւ խեղաթիւրել Համաշ-  
խարհային ճանաչում ստացած պատմական  
իրողութիւններ: Նրանք յատկապէս ճշում են  
ժխտել Հայ ժողովրդի պատմական անցացի՛  
Արեւմտեան Հայաստանի գոյութիւնը»

Աշխատութեան երրորդ բաժնում (էջ  
130-240) ընդգրկուած են հեղինակի կողմից  
թարգմանուած եւ առաջին անգամ մեզանում  
գիտական շրջանառութեան մէջ դրուած վաւե-  
րագրական նիւթերը՝ կանուներանէնի, մանկա-  
հաւաքի վերաբերեալ վաւերագրեր, ընթացիկներ,  
պաշտօնական այլ Հրամանագրեր եւ գրութիւն-  
ներ՝ Բացի այդ շյաւելուած թարգմանութիւն-  
ներ՝ բաժնում զետեղուած Պոլսոյ եկեղեցիների  
եւ ուխտատեղիների վերաբերեալ հինգ Հրովար-  
տական 18-րդ դարի պատմագիր՝ Պոզոս  
կաղզւանցու թարգմանութեամբ:

Վերոյիշեալ վաւերագրերի Հրապար-  
կումն ու գիտական ծանօթագրումը եւ առհա-  
սարակ Հայ մշակոյթի մատուցուած կարեւոր

ծառայութիւն է: Այդ նիւթերը զգալապէս  
սկզբնարարիւրների ֆոնտը, կ'օգնեն ապագայ  
Հայ պատմաբաններին աւելի փաստացի, աւելի  
ճշմարտապատում աշխատութիւններ գրելու  
օսմանեան կայսրութեան տիրապտութեան տակ-  
ապարած փոքրամասնութիւնների եւ ի մասնա-  
ւորի Արեւմտահայերի սոցիալ-տնտեսական  
ծանր վիճակի մասին:

Վերջում պարտիմ նշել, որ աշխատու-  
թեան ընդհանուր արժէքի մէջ իր որոշ բաժինը  
ունինանեւ գիտական օժանդակ նիւթերի Համա-  
կարգը՝ ծանօթագրութիւններ, բառարաններ,  
տեղանունների եւ անձնանունների ցանկեր եւ  
րովանդակութեան թուրքերէն ամփոփում: Միջ-  
նադարեան պատմական փաստերի, եղելութիւն-  
ների եւ իրողութիւնների մէջ ճիշդ կողմնո-  
րոշուելու Համար գիտական ծանօթագրութիւն-  
ների այս Համակարգը կարեւոր է եւ մասնագէտ  
հետազոտողներին, եւ շարքային ընթերցողնե-  
րին:

Ամփոփելու Համար Փրոֆ. Աւետիս  
Փափագեանի սոյն աշխատութեան մասին ըստ  
բաժինների իմ կատարած զննում-դատում-  
արժեւորումները, հարկ է, թէկուզ շատ Համա-  
օտ, պատասխանել հետեւեալ Հարցումներին.

- ա) Խնչն է եղել հեղինակի Համար  
գլխաւոր խնդիրը աշխատութիւնը ծրագրել-  
շարագրելիս եւ ինչքանով է կատարել այն.
- բ) Ո՛ւմն է Հասցէագրուած գիրքը  
Աշխատութեան զննական ընթերցումն  
ինձ ներքէ է այն Համոգման, որ նրա հեղինակի  
գլխաւոր մպատակը եղել է հետազօտել,  
հաստատել եւ ի ցոյց դնել պատմական  
ճշմարտութիւնը 18-19-րդ դարերում հայ-  
քրեական յարաբերութիւնների մասին, միշտ  
յնուհետև իրենց, բուրժերի ստեղծած, պահպա-  
նած եւ իրատարկած վաւերագրերի վրայ:

Պիւսաւոր առաջադրանքը կատարուած  
է մասնագիտական Հատուկեամբ, բարեխղճու-  
թեամբ եւ անմնացորդ: Պատմաբան, օսմանա-  
գէտ, եւ աղբիւրագէտ հեղինակը ընտրել, թարգ-  
մանել, վերծանել, ծանօթագրել, Հրատարակել,  
հետեւաբար եւ գիտական շրջանառութեան մէջ  
է դրել 135 էջ ծաւալով մինչ այդ մեզ եւ  
չատերին անյատ վաւերագրեր, որոնք Թուր-  
քերէն լեզուով վկայում են 18-19-րդ դարերում  
օսմանեան կայսրութեան մէջ փոքրամասնու-

թիւներէրի, կամ պաշտօնական-պետական արտաստուածութեամբ անհաւատ ռաեաների նկատմամբ կիրառուած խորականութեան, ծանրագոյն հարկերի անհամար սահմանափակումների եւ ամենադժգոյն պատիժներէ մասին: Այսինքն՝ աշխատութեան տարրեր բաժիններու եւ տարրեր խնդիրներ շօշափելիս կրկին ու կրկին սպացուցուած-հաստատած է, որ աւելի քան չորս դարերի տեւողութիւն ունեցող այդ յարաբերութիւնները եղել են քիտ իշխողի եւ հլու հպատակի, գրկողի եւ գրկուողի, բռնադատողի եւ արտադրող-ստեղծողի եւ թալանող-վայելողի յարաբերութիւն, որ օրինակացուել է ամենազօր սուղութեանր, փաշաների ու պէյերի հրովարտականութիւն, կարողութիւններով, ու հրամանագրերով, որոնք, որպէս կանոն, աւարտուում են դժգոյն սպառնալիքներով:

Ամենուր ու միշտ կրկնուող այդ սպառնալիքները արդեօք չեն խօսում կայսերական հրովարտակով ու հրամանագրերով պարտադրուած օրէնքներէ, պահանջներէ, ու պարտաւորութիւններէ անարդարացիութեան, անտանելի ծանրութեան եւ այդ ամէնի իբր հետեւանք՝ հայ ռաեայի ծայրաստիճան աղքատութեան եւ անվճարողականութեան մասին: Անշուշտ որ խօսում են:

Օսմանեան-թուրքական վաւերագրերի վրայ խարսխուած սոյն հաստատումներով Աւետիս Փափագեանը հիմնադրուում է ժամանակակից թուրք պատմաբանների յօրինած առասպելը օսմանեան-թուրքական դրախտի, հայոց քաղաքական անհնազանդութեան եւ պետական դաւաճանութեան մասին: Թուում է, այս գիրքը ուշադիր կարդացող ամէն մի բանական մարդ, ինչ ազգի ու դաւաճանքի էլ պատկանի, պիտի չհաւատայ նման շինծու առասպելներէ, որոնցով ողողել են միջազգային պատմապիտական մամուլը, զրականութիւնն ու աշխարհի գրաբանները:

Սեւ Վերջապէս ո՞ւմն է հասցէագրուած այս գիրքը:

Ըստ բնոյթի եւ ըստ էութեան այն հասցէագրուած է աշխարհին, մարդկութեանը, ազգերին ու ժողովուրդներին, միջազգային կազմակերպութիւններին, որ պաշտօն ու պարտաւորութիւն ունեն պահպանելու իրաւունքը, արդարութիւնն ու խաղաղութիւնը ազգերի միջեւ, բոլոր գիտնականներին, բոլոր

բարի կամ քիտէր մարդկանց, որոնք անկեղծօրէն մտահոգ են մարդկութեան ու ժողովուրդների բախտով: Խիստ անհրաժեշտ է, որ նրանք բոլորը ձեռքի տակ ունենան վերծանուած, հետազօտուած եւ ծանօթագրուած վաւերագրերի այսպիսի ժողովածու, որպէսզի բուն աղբիւրից իմանան պատմական ճշմարտութիւնը հայ-թրքական յարաբերութիւնների մասին:

Արդարեւ քննարկուող աշխատութիւնը ունի ճանաչողական մեծ արժէք, համոզելու, զանգուածային կարծիք ստեղծելու եւ վերաբերմունք մշակելու անվիճելի ոյժ, քանի խօսում է վաւերագրերի, այն է՝ ճշմարտութեան լեզուով: Այս բնոյթի եւ գիտական այս մակարակի աշխատութիւնների հրապարակումը կարեւոր է երկու առումով: Նախ՝ հակազդելու համար թուրք պատմաբանների եւ աշխարհագէտների նենգափոխումների շղաղարող մեծ հոսքին եւ ապա՝ համաշխարհային պատմա-աշխարհագրական հրականութեան ու տեղեկատուների մէջ պաշտպանելու եւ պահպանելու համար Հայաստանի եւ Հայ ժողովուրդի մասին բուն պատմական ճշմարտութիւնը:

Սեւ որպէսզի նպատակային եւ մեծապէս օգտակար այս գիրքը ըստ ամենայնի ծառայի իր բուն առաքելութեանը, պէտք է թարգմանուի անգլերէն լեզուի, ապա, հնարաւորութեան դէպքում, նաեւ ռուսերէնի եւ ուրիշ լեզուներէ: Վաստակաշատ գիտնականի այս խիստ շահեկան աշխատութիւնը հայոց լեզուի ներսահմանի մէջ թողնելը, կը նշանակի խիստ փոքրացնել նրա օգտակար գործողութեան գործակիցը, կամ ազդեցութեան ոլորտը:

Ազգանուէր գործերի ազնիւ հովանաւորներ ունենք նաեւ մեր գաղութի մէջ: Մնում է նրանցից մէկն ու մէկի ուշադրութիւնը սեւեռել սոյն երկասիրութեան ազգօգուտ նպատակի եւ արժանիքների վրայ:

Անշուշտ, նաեւ մեզ, հայերիս է հասցէագրուած այս աշխատութիւնը, քանի որ մեր մէջ քիչ չէ թիւը շարքային, նոյնիսկ մտաւորական հայերի, որոնք տեղեկի չլինելով հայ-թուրք յարաբերութիւնների բուն վաւերագրային փաստերին, միամտօրէն մեղադրում են սեփական ժողովրդին, թուրք պատմաբանների եւ քաղաքագէտների վերեւ յիշուած մեղադրանքներին աւելացնելով հայրենալուծութեան հակում, քափառաւեր գնչուի հոգեբանութիւն ունենալով մէջ:

Սա, պատմականորէն սխալ, հիմնադուրկ եւ վտանգաւոր մտայնութիւն է: Այսպէս մտածողները թող ուշադիր կարդան գրքի վաւերագրերի բաժինը (էջ 130-264) եւ Հայ-թուրք յարաբերութիւնների փաստերին ի մօտոյ ծանօթանալուց յետոյ ասեն, թէ տուեալ պայման ու հանգամանքներու մէջ պէտք է մտածէր ու անէր ազգը, որպէսզի չպատահէր այնպէս, ինչպէս որ պատահեց ամբողջ 400 տարի ու դեռ այսօր էլ շարունակուած է անմարդկային շրջափակումով, պարտադրուած անհաւասար պատերազմով եւ մասամբ նորին...

Հայաստանի եւ Հայութեան մասին պատմական ճշմարտութիւնը բացայայտելու, քարոզելու եւ տարածելու կենսականորէն կարեւոր գործում Փրոֆ. Աւետիս Փափազեանի այս գիրքը գիտական լուրջ ներդրում է, արժանի անվերապահ քաջալերանքի եւ անկեղծ շնորհակալութեան:

Հեղինակ՝ ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ .

Գրախօսեց՝ ՍԱՐԳԻՍ ԵԱՓՈՒՄԵԱՆ

**ԳՐԱԳԷՏԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԸ**

Երբ ֆրանսացի երեւելի գրագէտ Ֆլօպէր քսանընիգ տարեկան էր, գնաց հրատարակիչին քով եւ ցոյց տուաւ Անոր իր գրած վէպին ձեռագիրը:

Հրատարակիչը կարողաց ձեռագիրը եւ քանի մը օր ետք, յայտնեց գրագէտին, թէ շատ հաւնած էր եւ որոշած էր զայն տպագրել: Բայց միաժամանակ՝ անէցուց, թէ վճարում պիտի չընէր:

- Երբեք սովորութիւն չուցիմ վարձատրելու երիտասարդ գրողներու առաջին գործերը, ասիկա իմ քացարձակ սկզբունքս է:

- Բայց պարոն, ասիկա իմ քսաներորդ գործն է, կը պատասխանէ Ֆլօպէր շէշտուած սրտնեղութեամբ,

- Բայց ո՞ր եմ միւսները, ինչո՞ւ հետոյ չթերիր, հարցուց հրատարակիչը զարմացած:

- Պատուեցի թոյրն ալ՝ գոհ չէի ոչ մէկէն, եղաւ հեղինակին կտրուկ պատասխանը:

Այս խօսքերը շատ հաճելի թուեցան հրատարակիչին եւ վճարեց վէպին համար ճշանակալից գումար մը:

Մանրավէպեր էջ 87 վարդան Ա. Գինյ.  
Տիւլկերեան